## ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի ԹԻՎ ԹԻՎ 12-Ա, 14-Ա ԵՎ 15-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 12-Ա որոշման մեջ «Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ» գրառման դիմաց նշված է «կողմ 9», սակայն առկա է համայնքի ավագանու 8 անդամի ստորագրություն: Անհրաժեշտ է կողմ բառից հետո նշված «9» թիվը փոխարինել «8» թվով:

Որոշման ընդունման և ստորագրող պաշտոնատար անձի ստորագրման ամսաթվերը տարբեր են գրառված:

Որոշման 2-րդ կետում և թիվ 14-Ա որոշման վերնագրում ու 1-ին կետում նշված «չեղյալ համարելու» բառերը փոխարինել «ամբողջությամբ չկայացած հայտարարելու» բառերով:

Որոշման 3-րդ կետում և թիվ 15-Ա որոշման վերնագրում նշված «համայնքի ավագանու» բառերից հետո լրացնել «2019 թվականի» թիվը և բառը:

Թիվ 14-Ա որոշման վերնագրում «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառից առաջ լրացնել «ՀԱՅԱՍՏԱՆԻ» բառը:

Որոշման 1-ին կետում՝ հրավերով նախատեսված մատակարարվելիք ապրանքների տեխնիկական բնութագրում տեղ գտած թերության պատճառներ կամ տեխնիկական բնութագրի համարժեքության համապատասխանության վերաբերալ հիմնավորումներ ներկայացված չեն:

Թիվ 15-Ա որոշման նախաբանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ մասին կատարված հղումը սխալ է, քանի որ այն սահմանում է տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները Գյումրի և Վանաձոր համայնքներում:

Որոշման 1-ին և 4-րդ կետերը չեն համապատասխանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջներին, համաձայն որի՝ համայնքի ավագանին սահմանված կարգով համայնքային ծառայության պաշտոնների մասով աշխատակազմի աշխատողների քանակը, կառուցվածքը կամ հաստիքացուցակը հաստատելու, ինչպես նաև փոփոխելու կամ լրացնելու հարցում որոշում է կայացնում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին դիմելու մասին: Աշխատակազմի աշխատողների քանակը, կառուցվածքը կամ հաստիքացուցակը հաստատված, ինչպես նաև փոփոխված կամ լրացված է համարվում Հայաստանի Հանրապետության

կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

*Կատարող՝ Ն.Մարտիրոսյան*
*23.04.2020թ.*